# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N3098 - Ա** **22 ապրիլի 2009թ.**

ՏԻՉԻՆԱՅԻ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 19 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՆՈՒԿԻ ՔԵՐՎԱՆՅԱՆԻ, ՀԱԿՈԲ ԳԵՎՈՐԳԻ ՉԵՊՉՅԱՆԻ, ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲԻ ՉԵՊՉՅԱՆԻ, ՌՈՒՍՏԱՄ ՀԱԿՈԲԻ ՉԵՊՉՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 113.71ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սիրանուշ Մանուկի Քերվանյանի (ծնված 25.02.1948թ.), Հակոբ Գևորգի Չեպշյանի (ծնված 30.12.1946թ.), Գևորգ Հակոբի Չեպշյանի (ծնված 18.08.1976թ.), Ռուստամ Հակոբի Չեպշյանի (ծնված 15.08.1982թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Տիչինայի փողոցի 4-րդ նրբանցքի հ.19 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 669.2քմ, որից 79.28քմ մակերեսով հողամասը Սիրանուշ Մանուկի Քերվանյանին, Հակոբ Գևորգի Չեպշյանին, Գևորգ Հակոբի Չեպշյանին, Ռուստամ Հակոբի Չեպշյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասն է: Բնակելի տան զբաղեցրած հողամասին կից օգտագործվող 589.92քմ մակերեսով հողամասից օրենքի ուժով 300քմ մակերեսով հողամասը կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 289.92քմ մակերեսով հողամասը կարող է օտարվել ուղղակի վաճառքի միջոցով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 07.12.2007թ. վճիռը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 13.11.2008թ. հ.204, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 16.04.2009թ. հ.20/2-Ե/251 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 14.04.2009թ. հ.20-Ել-3262 եզրակացությունը, համաձայն որի Տիչինայի փողոցի 4-րդ նրբանցքի հ.19 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Տիչինայի փողոցի 4-րդ նրբանցքի հ.19 հասցեում Սիրանուշ Մանուկի Քերվանյանին, Հակոբ Գևորգի Չեպշյանին, Գևորգ Հակոբի Չեպշյանին, Ռուստամ Հակոբի Չեպշյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 79.28քմ մակերեսով հողամասի չափով, բնակելի տանը կից հողամասի հողօգտագործման իրավունքը 300քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 379.28քմ մակերեսով հողամասի և 669.2քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 300քմ հողամասից ավել օգտագործվող 289.92քմ մակերեսով հողամասը տարածագնահատման 7-րդ գոտու կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Սիրանուշ Մանուկի Քերվանյանին, Հակոբ Գևորգի Չեպշյանին, Գևորգ Հակոբի Չեպշյանին, Ռուստամ Հակոբի Չեպշյանին:

3. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից:

5. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

6. Տիչինայի փողոցի 4-րդ նրբանցքի հ.19 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Տիչինայի փողոցի 4-րդ նրբանցքի հ.19 տուն>>:

7. Նախազգուշացնել հողօգտագործողին, որ հողամասի առուվաճառքի պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:

8. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Սիրանուշ Մանուկի Քերվանյանի, Հակոբ Գևորգի Չեպշյանի, Գևորգ Հակոբի Չեպշյանի, Ռուստամ Հակոբի Չեպշյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

9. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան:

10. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

11. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ